



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Պոլիսը եւ դարձեալ Պոլիսը

Հայ եկեղեցւոյ նուիրապետական աթոռներէն երկուքը կը գտնուին երկիրներու մէջ որոնք հայութեան զանգուածի հակակշռէն հեռու կը մնան, հետեւաբար՝ խոցելի արտաքին ճնշումներու եւ տնօրինութեանց:

Այսօր մասնաւորաբար լուսարձակի տակ է Պոլսոյ պատրիարքական ընտրութիւնը, որ կը յետաձգուի ինը տարիներէ ի վեր, խռովեալ վիճակի մէջ պահելով համայնքը:

Հրանդ Տինք կը դաւանէր որ Պոլիսը մաս չի կազմեր սփիւռքին. արդարեւ, ընդհանրացող տեսութիւն մը որ կը հիմնուի պատմական այն իրողութեան վրայ որ հայութիւնը կեանք մը ապրած էր, ժառանգութիւն մը կերտած էր նոյնիսկ Ֆաթիհ Սուլթան Սուհամաթի կողմէ Պոլսոյ գրաւումէն (1453) իսկ առաջ: Սակայն Պոլիսը Հայաստան ալ չէ: Հետեւաբար մեր հաւաքական ժառանգութեան խարխիսներէն մէկն է որ ատենին, դարերով կառավարած է հայութեան ազգային, եկեղեցական ու քաղաքական գործերը: Այսօր հայութեան զանգուածը, ինչպէս նուիրական միւս աթոռները, պարտադրաբար օրինական կապ մը չունին Պոլսոյ պատրիարքութեան հետ, հետեւաբար անոնց իրաւասութենէն դուրս կը մնայ մասնակցելու եւ միջամտելու հնարաւորութիւնը: Այսուհանդերձ, հայութիւնը ամբողջ, իր ժառանգութեան իրաւունքով հետաքրքրուած է Պոլսոյ պատրիարքութեան եւ ընդհանրապէս պոլսահայութեան ճակատագրով:

Միւս կողմէ, Թուրքիան այսօր դարձած է հզօր պետութիւն մը, եւ այդ իսկ բերումով, կը թուի թէ փոքրամասնութեան մը պատրիարքութիւնը իր պետական օրակարգին վրայ յետին աստիճան պիտի գրաւէր, սակայն, այդպէս չէ իրականութիւնը. թուրք պետութիւնը ամենէն մանրակրկիտ կերպով կը հետեւի այդ փոքրամասնութեան կեանքով ու կը հակակշռէ անոր հոգեւոր իշխանութեան կեդրոնը:

Այդ ուշադրութեան պատճառը այն է որ 1923ի Լոզանի դաշնագրով թուրք պետական իշխանութիւնները յանձնառու դարձած են միջազգային հասարակութեան դիմաց պաշտպանելու այդ փոքրամասնութեանց իրաւունքները: Տարբեր հարց որ 1940ական թուականներու վարլըք վերկիսիի (հարստութեան տուրք) կամ 1955ի Մեպտեմբեր 6ի արարքներով եւ այլ միջոցներով բռնաբարած են դաշնագրին սկզբունքներն ու ոգին, սակայն, զգայուն ժամանակներուն, թուրք իշխանութիւնները խոհեմ կը նկատեն նոր բարդութիւններ չաւելցնել իրենց քաղաքական այլ հարցերուն վրայ:

Այս օրերուն, երբ Թուրքիոյ յարաբերութիւնները գերլարուած վիճակ մը կը պարզեն Միացեալ Նահանգներու եւ Եւրոպայի հետ, Անքարա աւելի ուշադիր կը մնայ իր միջազգային յանձնառութիւններուն վրայ:

Սփիւռքը եւ Հայաստանը օրինաւորապէս իրաւունք չունին միջամտելու Պոլսոյ պատրիարքական ընտրութեան փափուկ կացութեան, սակայն, իրաւունքն ունին իրենց տեսակէտը պաշտպանելու եւ ի հարկին ձայն բարձրացնելու միջազգային քաղաքական հրապարակի վրայ, եթէ ոտնակոխութիւն եկեղեցւոյ եւ համայնքին իրաւունքները: Պատրիարքարանն ու համայնքը կը մնան որպէս պատանդ Թուրքիոյ մէջ:

Ինը տարիներու տուայտանքէն ետք չի լուծուիր Պոլսոյ պատրիարքութեան ընտրութեան հարցը որովհետեւ, առաջին հերթին, թուրք իշխանութեանց համար ընդատակեայ ձեւ մըն է համայնքը քայքայելու: Իսկ միւս պատճառը, զոր համարձակօրէն պէտք է ընդգրկել, բազմաթիւ այլ գաղութներու նման ղեկավարութեան այլասերումն է:

Շատ մը այլ գաղութներու նման պատեհապաշտ մարդիկ անցած են իշխանութեան լծակներուն գլուխը եւ իրենց վերջին մտահոգութիւնն է ազգին ծառայութիւնը: Մասնաւոր, երբ ումանք ձեւազեղծուած ձեւով կ'ընկալեն այդ պատասխանատուութիւնը:

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՏԱԳՆԱԳՐ՝ ԼՈՒՍԱՐԶԱԿԻ ՏԱԿ

Շատ մեղան կը սպառի պոլսահայ մամուլի մէջ, ըսուելիքն ու չըսուելիքը հրապարակելու եւ համայնքը իրարանցումի մէջ պահելու. եւ որքան ալ մօտէն հետեւիք տեղոյն հայկական մամուլին՝ դժուար թէ կարենաք ամբողջական պատկեր մը կազմել ընդհանուր կացութեան, մարդոց դիրքաւորումներուն եւ այդ դիրքաւորումներու ետին գտնուող դրդապատճառներու մասին: Օրինակ, պետութիւնը բռնագրաւուած համայնքային կալուածներ կը վերադարձնէ. համայնքէն առաջ որոնք կ'օգտուին այդ կալուածներէն, որոնք են կապալառուները, շինարարները, ֆինանսագէտները որոնք, օրինակ իրենց շահուն համար պիտի նախընտրէին ապիկար կամ շահադէտ իշխանաւոր մը որ նպաստէ իրենց առեւտրական շահերուն, որոնք կը թաքնուին համայնքի շահերու ետին:

Օրինակ, համայնքին մէջ գոյութիւն ունի զօրեղ դէմք մը յանձին Պր. Պետրոս Շիրինօղլուի, որ նախագահն է Սուրբ Փրկիչ հիւանդանոցին եւ ՎԱՏԻՓի (վաքըֆներու խորհուրդ): Կ'ըսուի թէ ան մտերիմ կապեր ունի իշխանութեանց հետ, եւ մասնաւորաբար՝ նախագահ Էրտողանի հետ: Հարց է թէ ան որքանով կը ներկայացնէ համայնքի կարիքները իշխանութեանց, եւ որքանով իր տեսակէտները կը պարզէ փոխան իրականութեանց՝ իշխանութեանց մօտ. եւ փոխադարձաբար, որքանով իր ցանկութիւնները կը պարզէ համայնքին իբրեւ պետութեան ցուցումները:

Բարացուցական վերաբերմունք մըն է նաեւ Պր. Շիրինօղլուի համայնք կառավարելու ձեւը, երբ վեհանձնութեա մը հարց կու տայ տարակարծիք ժողովականներու թէ իր կատարած բարերարութեանց դիմաց ինչ տուած են որ հակաձառելու իրաւունք կ'ուզեն: (Մարմարա, Մեպտեմբեր 13, 2017):

Հակառակ Արամ Աթեշեան Սրբազանի մեքենայութեանց կրօնական ժողովը յաջողած էր իբրեւ տեղապահ ընտրել Գերշ. Ս. Արամ Արք. Պեքճեանը:

Ժրնելի Գագաթնաժողովէն Ետք Զինադադարի Խախտումները Կը Շարունակուին. Էդուարդ Նալբանդեան



ԵՐԵՒԱՆ.- Հայաստանի եւ Ատրպեյճանի նախագահներու ժր-նելեան հանդիպումէն ետք, Ատրպեյճան կը շարունակէ խախտել հրադադարը: Այս մասին լրագրողներու յայտնեց Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան՝ Լեհաստանի արտաքին գործոց նախարար Վիտոլդ Վաշչիկովսքիի հետ Երեւանի մէջ ունեցած հանդիպումէն ետք:

Նալբանդեան նաեւ ասելցուց, որ իր լեհ գործընկերոջ ներկայացուցած է միջազգային իրաւունքի՝ ժողովուրդներու ինքնորոշման ու տարածքային ամբողջականութեան հիման վրայ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման ուղղուած ԵԱՀԿ Մինսկի խումբի ու հայկական կողմի ջանքերը:

«Ցաւօք, Ժնեւում տեղի ունեցած գագաթնաժողովից յետոյ տարբեր շահարկումներ են հնչում Բաքուից, զինադադարի խախտումները շփման գծում շարունակուում են, ինչի հետեւանքով երէկ զինուոր է զոհուել:

Մենք համակարծիք ենք Լեհաստանի ԱԳ նախարարի հետ, որ միջազգային իրաւունքի սկզբունքների վրայ հիմնուած Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան բացառապէս խաղաղ կարգաւորմանն այլընտրանք չկայ», նշեց նախարար Նալբանդեան:

Նախարարը յայտնեց, որ այս տարի կը լրանայ հայ-լեհական դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 25-ամեակը եւ Լեհաստանի մէջ հայ համայնքի ձեւաւորման 650-ամեակը:

«Լեհաստանում հայկական համայնքը հաստատուն կամուրջ է մեր երկու բարեկամ պետութիւնների միջեւ: Անցած դարերի ընթացում Լեհաստանում հայերը հանդիսացել են արժանի քաղաքացիներ՝ որպէս տաղանդաւոր պետական, ռազմական գործիչներ, գիտնականներ, արուեստաբաններ: Տարուայ ընթացքում բազմաթիւ միջոցառումներ են կազմակերպուել նուիրուած լեհահայութեանը՝ ցուցահանդէսներ, համերգներ գիտաժողովներ: Մենատում բացուել է «Հայերը Լեհաստանում» խորագրով ցուցահանդէսը:

Այս ամէնն առաւել քան խորհրդանշում է հայ-լեհական դարաւոր բարեկամութիւնը: 2005-ին Լեհաստանի Մէյմը (խորհրդարանը-Խմբ.) ընդունել է Հայոց Ցեղասպանութեան ճանաչման վերաբերեալ բանաձեւ, իսկ 2015-ին համահեղինակել է ՀՀ կողմից ՄԱԿ-ի մարդու իրաւունքների խորհրդում նախաձեռնած ցեղասպանութեան կանխարգելման մասին բանաձեւը, ըսաւ նախարարը:

Նախարարը իր խօսքը եզրակացուց՝ ըսելով, որ երկու երկիրները ունին մեծ ներուժ տնտեսական ոլորտէն ներս:



Աντσούκ-Մորτσուկ...
 Μια σειρά άρθρων υπέρ της ενότητας
 της αρμενικής κοινότητας στην Ελλάδα
 του Σήφη Κασσεσιάν

**ΤΟ ΠΟΛΙΤΙΚΟ ΓΡΑΦΕΙΟ ΤΟΥ ΤΑΣΝΑΚΤΣΟΥΤΙΟΥΝ
 ΔΗΜΙΟΥΡΓΕΙ ΕΝΑ ΝΕΟ ԵΘΝΟΣ**

Στα προηγούμενα σημειώματα της παρούσας σειράς είδαμε ότι το Μπιρό του Τασνακτσουτιούν υιοθέτησε μια μεγαλομανή πολιτική μετά την άνοδό του στην εξουσία (ανάλογη μεγαλομανία παρατηρούμε και στους κόλπους της ηγετικής κλίκας συμμάχων και συνεργατών του Τασνακτσουτιούν Νεοτούρκων του Κομιτάτου Ένωση και Πρόοδος), μια πολιτική που το οδήγησε στην υιοθέτηση της μεσιανικής άποψης ότι αυτό ήταν ο φορέας των πεπρωμένων του αρμενικού έθνους. Έτσι, αυτοί οι ολιγάριθμοι, πολιτικά άπειροι και πολιτιστικά πτωχοί (κάνεις τους δεν αναφέρεται ούτε καν ως υποσημείωση στην ιστορία των ευρωπαϊκών πολιτικών κινήσεων), θεωρήσαν ότι μπορούσαν να κυβερνήσουν μόνοι τους το σκάφος του έθνους σε καιρούς θυελλώδεις και σε θάλασσες τρικυμιώδεις. Τα αποτελέσματα υπήρξαν τραγικά: συνεργασία με την πιο σωβινιστική και εγκληματική συνιστώσα του τουρκισμού (τους Νεοτούρκους), παράδοση δύο φορές μέσα σε τρία χρόνια της φημισμένης για την οχυρή της θέση πόλης Καρς αμαχητί στον εχθρό, απώλεια των επαρχιών Καρς και Αρνταχάν, υπογραφή των εξευτελιστικών συνθηκών του Μπατούμ και της Αλεξαντροπόλ, απώλεια του Καραμπάχ, μάταιη θυσία χιλιάδων Αρμενίων με το τυχοδιωκτικό κίνημα της 18ης Φεβρουαρίου 1921, προσφορά συμμαχίας στον Κεμάλ...

Έχοντας βρεθεί πλέον στο εξωτερικό, η ολιγομελής ομάδα των μεγαλομανών τυχοδιωκτών που απάρτιζε το Μπιρό συνέχισε απτόητη το εθνοφθόρο έργο της. Προκειμένου να διαφοριστεί από τους Αρμένιους μπολσεβίκους που -με πολλές αρνητικές παραμέτρους- επιτελούσαν ανορθωτικό έργο στην καθημαγμένη Αρμενία, το Μπιρό διατήρησε για μερικά χρόνια στην εξορία ένα είδος σκιδώδους αντιπροσωπευτικού οργάνου μιας φαντασιώδους αρμενικής κυβέρνησης υπό τον τίτλο της Αρμενικής Εθνικής Αντιπροσωπείας και προσπάθησε να εκμεταλλευτεί τον αντισοβιετισμό της Δύσης για να εξασφαλίσει για τον εαυτό του μια λαθρόβια ύπαρξη. Καθώς, όμως, κάτι τέτοιο ήταν πρακτικά αδύνατο, αφού η Δύση αναγνώρισε πολύ σύντομα τη Σοβιετική Ένωση και συνήψε μαζί της διπλωματικές και εμπορικές σχέσεις, το Μπιρό έδωσε μεγάλη έμφαση στον εσωτερικό. Τα μέλη του αποπειράθηκαν να ικανοποιήσουν τη μεγαλομανία τους αποβαίνοντας οι κυβερνήτες ενός υποκατάστατου (surrogate) κράτους και ενός έθνους υποκατάστατου του αρμενικού. Σε κομματικό επίπεδο διαμορφώθηκε μια οργάνωση, τα μέλη της οποίας έπρεπε να υπακούουν τυφλά στις εντολές του κόμματος. Στο όνομα μιας επαναστατικότητας που είχε υπάρξει στο απώτατο παρελθόν και μάλιστα πολύ εφήμερα, αλλά είχε εξαφανιστεί προ πολλού και παντελώς, τα κομματικά μέλη έπρεπε να αφήνουν κατά μέρος ακόμα και την προσωπική αξιοπρέπεια τους. Με θλίψη διαβάζει κανείς τα απομνημονεύματα του Αρσαφίρ Σιραγκιάν. Το παλληκάρι που διακινδύνευσε τη ζωή του για να εκτελέσει στη Ρώμη τον πρώην Τούρκο Μεγάλο Βεζίρη Σαϊντ Χαλίμ, έναν από τους κορυφαίους υπεύθυνους της γενοκτονίας, αυτός ο αγνός πατριώτης και γενναίος άντρας εξευτελιζόταν αποσιωπώντας το όνομα του διοργανωτή της Επιχείρησης Νέμεσις, υπεύθυνης για το σύνολο των σχετικών εκτελέσεων, του Σαχάν Ναταλί. Διότι ο Σαχάν Ναταλί είχε στο μεταξύ διαφωνήσει με την κομματική ηγεσία...

Σε εξωκομματικό, ενδοδιασπορικό επίπεδο, το Μπιρό επιδόθηκε με επεμέλεια και μεθοδικότητα στο έργο της δημιουργίας ενός άλλου από το αρμενικό έθνους, ενός έθνους που θα ήταν ακόλουθος και εντολοδόχος του, του έθνους των τασνάκ. Ο Ελληνοαρμένιος αναγνώστης που ίσως σκέπτεται ότι υπερβάλλουμε, ότι λιβελλογραφούμε, ας σκεφτεί φερ' ειπείν την ελληνική κοινότητα της Αυστραλίας ή της Γερμανίας ή της Αμερικής. Θα μπορούσε κανείς Ελληνοαρμένιος να φανταστεί ότι το κόμμα της Νέας Δημοκρατίας, του ΠΑΣΟΚ ή κάποιο άλλο θα μπορούσε να δημιουργήσει δικά του σχολεία, δικά του αθλητικά, φιλανθρωπικά και πολιτιστικά σωματεία; Θα μπορούσε να φανταστεί τους Έλληνες κομμουνιστές ή σοσιαλιστές ή φιλελεύθερους να δημιουργούν μια άλλη, δική τους εκκλησία; Ε, λοιπόν, αυτά έγιναν -και γίνονται- στην αρμενική διασπορά. Στην δυστυχή, πτωχή -στην αρχή της τουλάχιστον-, ταλαίπωρη και με ακατάσχετο ρυθμό αποδιοργανούμενη και διαλυόμενη αρμενική διασπορά, στη διασπορά που δεν έχει απομείνει παρά μόνο μια σκιά, ένα φάντασμα, ένα αραιό νέφος που αρκεί ένα ανάλαφρο αεράκι για να το κάνει να ξεφτίσει, στη διασπορά, όπου μια από τις πιο "ζωντανές" κοινότητές της, η ελληνοαρμενική, δεν συγκεντρώνει στην κορυφαία εκδήλωσή της -την επέτειο της γενοκτονίας- δεν συγκεντρώνει παρά το 1-5% των μελών της (400 άτομα σε σύνολο 20, 30 ή 40.000 Αρμενίων στο λεκανοπέδιο) ένα κόμμα έχει τις δικές του αποκλειστικά δομές, ξέχωρες από εκείνες των λοιπών ομοεθνών. Διότι πρέπει οι ηγέτες αυτού του κόμματος να έχουν την ψευδαίσθηση ότι ηγούνται του έθνους...

Շարունակում է 1-ին

Պոլիսը եւ...

Սակայն այդ ընտրությամբ հանդերձ երկար ժամանակ առաջ որ Արամ Սրբազան համագործակցության հրաժարիլ պատրիարքական փոխանորդի պաշտօնին: Կարծեք թե հարցերը լուծման փուլին մեջ մտած էին որ համայնքը քաջութիւնը ունեցաւ Պատրիարքական Հնարանին Նախաձեռնարկ Մարմին մը կազմել որ պիտի նախապատրաստէր ընտրութիւնը:

Նախաձեռնարկ մարմինը դիմեց պետութեան ընտրութեան թուական մը նշանակելու: Դիմումը կատարած է Պոլսոյ կուսակալութեան Օգոստոս 9, 2017ին: Պետութեան մօտ կատարուած դիմումները պատասխան կը ստանան երկու ամսուան սպասումէ մը վերջ: Հետեւաբար Հոկտեմբեր 9ին տակաւին պաշտօնական պատասխան չէր տրուած դիմումին: Սակայն, սպասման ժամանակին խառնակութիւններ արդէն ծայր էին տուած. Որքան մամուլը՝ նոյնքան նաեւ համայնքին իշխանաւորները լծուած էին անհատական գուշակութիւններու՝ մեկնաբանելով պետութեան ըսածն ու չըսածը:

Օրինակ, շուկաներ կը շրջին որ Նախաձեռնարկ Մարմինն մեջ գոյութիւն ունին անդամներ որոնք հաճոյ չեն իշխանութեանց: Ո՛ր եւ է րբ իշխանութիւնները նման հարց պարզած են, եւ որոնք են այդ անբարեփոխելիները:

Մեծ հարցական մըն է նաեւ որ Օգոստոս 30ին, Յաղթանակի տօնակատարութեան պատրիարքարանը բացառաբար հրաւեր չէ ստացած Անքարայէն. մեկնաբանութիւնը այն է որ պետութիւնը համակիր չէ Պեքճեան Սրբազանին եւ այդ կերպով կ'արտայայտէ իր վերաբերումը:

Մամուլը, ասեկոսները, բամբասանքները աւելի կը պղտորեն կացութիւնը քան իշխանութեանց լռութիւնը:

Պեքճեան Սրբազանի յաճախակի թոհոյները դէպի Էջմիածին, Սոսկուա, Գերմանիա, Մարսել և այլուր կարծեք թե չեն ստտարեր կացութեան կայունացման:

Այս իրարանցման մեջ կրակի վրայ իւր թափելու բնոյթ ունեցաւ Խաճապու Պարսամեան Սրբազանի մէկ մեկնաբանութիւնը: Սրբազանը, հակառակ իր վայելած ժողովրդականութեան, թեկնածու չէ պատրիարքութեան, եւ ընդհանրապէս ալ չափազանց զգոյշուոր եւ բարեկիրթ վերաբերում ունի այլ թեկնածուներու նկատմամբ: Այսուհանդերձ, կ'արժէ կարողալ մամուլը հարգողները ստեղծուած փոթորիկին մասին. այսպէս, Մարմարաի Հոկտեմբեր 6, 2017ի թիւին մեջ կը կարդանք. Պեքճեան սրբազան յայտնեց իր սրտաբեկութիւնը: Իր սրտաբեկութեան գլխաւոր պատճառներէն մէկն ալ քանի մը օր առաջ ժամանակի մեջ Ամերիկայի հայոց Առաջնորդ Խաճապու:

Սրբազանին հետ կատարուած հարցազրոյցն էր, որուն մեջ իր կողմէ այնքան սիրած ու գնահատուած Խաճապու Սրբազան շատ ծանր սխալներ կը վերագրէր կառավարութեան նկատմամբ գործուած զանցառումներու կապակցութեամբ ու գրեթէ կ'առաջարկէր որ Տեղապահը հրաժարի այս պաշտօնին: Տեղապահ սրբազանը ըսաւ որ շատ յուսախաբ եղած էր. իրենք սխալ բան մը չըրին, համայնքին ներս քսու ալ չկայ ինչպէս ոմանք կը պնդեն, ընդհակառակը կայ խաղաղութիւն մը որ կ'երեւի կ'անհանգստացնէ կարգ մը մարդիկ: ... այս ինք տարիներուն ընթացքին ալ ուշագրաւ է որ որոշ այլասերում մը, նահանջ մը [ապրեցաւ համայնքը] ըսաւ Պեքճեան Սրբազան:

Գուշակութիւնները եւ մեկնաբանութիւնները կը կրծեն մարդոց ջիղերը եւ սպասումը աւելի անտանելի կը դարձնեն ամբողջ համայնքին համար:

Արդարութեան համար պէտք է անդրադառնանք նաեւ Խաճապու Սրբազանի յայտարարութեան որ լոյս տեսած է ժամանակ 'օրաթերթի Հոկտեմբեր 3, 2017ի թիւին մեջ: Գրութեան ցնծագին վերնագիրը աւելի կը մատնէ խմբագիր Արա Չօչունեանի ցանկութիւնը որ կոչուած կը թուի ըլլալ Խաճապու Սրբազանի արտայայտութեան մեջ: Տպաւորիչ գիրերով թերթը կ'աւելցնէ 'Նիւ Եորքէն կարեւոր եւ անանտանելի յորդորներ. թերթը ապա տեղ կու տայ Խաճապու Սրբազանի յայտարարութեան որ, շատ հաւանաբար խմբագրուած կերպով կ'ըսէ. 'Տեղապահ Գարեգին Սրբազանը լաւ, սքանչելի հոգեւորական մըն է: Զինքը շատ կը սիրէմ ու կը յարգեմ: Բայց միւս կողմէ, պետութեան համար ընդունելի՛ է թե՛ ո՛չ: Իր շարունակելը օգն լաւ կը բերէ, թե ո՛չ տակնուվրայութիւնը, պատակաստումը կը խորացնէ: Այս վիճակով կարծես թէ աւելի բաժան-բաժան կ'ըլլայ համայնքը: Այժմ երեւոյթները ցոյց կու տան որ յստակ է՝ թէ ինքը պետութեան համար ընդունելի չէ: Օգոստոս 30ի հրաւերին չհասնիր անթաքայց ազդանշան մըն է: Պէտք է ընդունիլ այս բանը: Պէտք է ընդունիլ եւ անհրաժեշտը պէտք է ընել ու պէտք է կեդրնականապէս հարցի լուծման վրայ. Գարեգին Սրբազան ազնիւ անձնատրութիւն մըն է: Պէտք է օգնել իրեն՝ որպէսզի տեսնէ վիճակը եւ չմատնուի անընդունելի վիճակի: Հիմա բոլորը կը շարագործեն զինքը՝ իրենց շահերուն համար: Անցեալի մեջ ես ալ պաշտպանած եմ իր անունը, նոյնիսկ բարեխօսած եմ իր մասին զանազան հարթակներու վրայ: Գիտեմ, որ իր առաքելութիւնն է երթալ ընտրութեան, բայց այժմու վիճակով՝ դժուար: Ինչ կը վերաբերի պատակաստումի հաւանականութեան՝ ճիշդ չի թուիր Սրբազանին մեկնութիւնը. ուրիշ չեմ թեկնածու անպայմանօրէն աւելի պիտի պատակտէ համայնքը: Միւս կողմէ Խաճապու Սրբազան անպատասխանատու յայտարարութիւն մը պիտի չընէր. ան իրազեկ անձ մըն է եւ իր կատարած յայտարարութիւնը ճակատագրական կը թուի ըլլալ: Միեւնոյն մեկնաբանութիւնները, տարբեր ժողովներու, յայտնուած էին Աթէշեան Սրբազանի եւ Պր. Շիրինօղլուի կողմէ: Հարց է թէ այս բոլորը իրենց ցանկութիւննե րն են, թէ պետական լռութեան մեկնաբանութիւններն ու արձագանգները: Յամենայնդէպս անոնք խաղաղութիւն չեն պարզելեր համայնքին. ընդհակառակն աւելի կը բորբոքեն զգացումները եւ կը խռովեն համայնքը: Թրքական իշխանութեանց համար չկայ աւելի հաճելի երեւոյթ քան տեսնել համայնք մը խռոված ինքն իր մեջ եւ կորսուած իր անելիքի ճամբուն վրայ:

Իրավիճակ մը ուր կը շարունակէ տագնապի մեջ պահել համայնքը. տագնապ՝ որուն արձագանգները կը հասնին հեռաւոր անկիւնները հայաշխարհին:

Դատապարտում

Յարգարժան խմբագրություն ՊԱՅՔԱՐ շաբաթաթերթի,

Խստորեն կը դատապարտեմ ՊԱՅՔԱՐ թերթին հրատարակությունը Լիբանանի մեջ պետական իշխանություններու միջոցով դադրեցնել տալու կարգ մը արարածներու նկրտումները: Շատ ցուալի է արձանագրել, որ մինչ 1970-ին հայկական երկու օրաթերթ փակել տալու փորձը կատարած էր Թուրքիոյ դեսպանությունը (եւ, բնականաբար, ձախողած ու խայտառակուած), այսօր նոյն աշխատանքին լծուած է, այլոց շարքին, այդ օրաթերթերէն մէկուն խմբագիրը... Նոյն խայտառակությունը կը սպասէ մերօրեայ հայանուն թուրքերու փորձերուն:

Մփիւռքի մեջ հայերէն թերթ մը փակել տալու ամեն փորձ ստորութիւն է՝ ինչ ալ ըլլան պատճառները: Ո՛չ մէկ պատճառ կրնայ արդարացնել նման քայլը:

Կոչ կ'ուղղեմ հայութեան ի հայրենիս եւ ի սփիւռս աշխարհի, իր բողոքի ձայնը բարձրացնել եւ դատապարտել հայապահպանութեան կռուան մը տապալելու բացայայտ քայլերու հեղինակներուն վասակությունը:

Գեորգ Եազրճեան, Երևան

ՀԱՅԱՆՈՒՆ ՄԱՏՆԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՌԱԿ ՀՆԱԳՈՒՅՆ ՕՐԳԱՆՆԵՐԻՑ «ՊԱՅՔԱՐ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ՌԻ ՆՐԱ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԴԵՄ ԹՈՒՐՔԱԲԱՐՈ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՍՈ ՍՈՍԿՈՅՅԱՆ, Բեյրութ

Մարդկային էության մեջ ծվարած թունավոր նախանձն ու նենգությունը հայ մտավորականության տաղանդավոր ներկայացուցիչների դեմ, նրանց կործանելու, մամուլի ազատ ձայնը լռեցնելու բազմաթիվ փորձեր են եղել 20-րդ դարում: Թալաթ փաշայի նաև և հայանուն մատնիչների օգնությամբ 1915 թ.ի Ապրիլ 24-ի գիշերը պալսահայ մտավորականության ընտրանին ձերբակալվեց եւ մեծ մասամբ բնաջնջվեց: 1937 թ.ից Միքիլ թե Կենտրոնական Ասիա արքայազնին Խորհրդային Հայաստանի պայծառ դեմքերից շատեր, ստալինաբերիական հալածանքների տարիներին: 70-ական թթ. սկզբին, Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը, Բեյրութի իր դեսպանության միջոցով դատ բացեց Ռամկավար Ազատական կուսակցության պաշտոնաթերթ «Զարթոնք»ի եւ Հայ Հեղափոխական Դաշնակցության օրգան «Ազդակ»ի դեմ: Ամբողջ Լիբանանի հայասեր արաբ մտավորականությունը ոտքի կանգնեց եւ պաշտպանեց արաբական աշխարհի ազատ խոսքի եւ մամուլ ազատությանը ոստան Լիբանանի հայկական հեղինակավոր թերթերը:

2017 թ.-ի հոկտեմբերյան մի «գեղեցիկ» օր լիբանանահայությանը վերա-պահված էր մի խայտառակ եղելություն, որի հեղինակները Լիբանանի Ռամկավար Ազատական կուսակցության կնիքով եւ պաշտոնական հաղորդագրությամբ, ստոր մի հայտարարություն էին հրապարակել Լիբանանի արաբական համացանցային պաշտոնաթերթերից «Ալ-Նաշրա»ում: Այնտեղ, թրքաբարձ «խաֆիե»ների «շառ գցելու» էժանագին ոճով գրապարտություններ էին հրապարակել ռամկավար մամուլի հնագույն եւ ամենահեղինակավոր օրգաններից «Պայքար»-ի դեմ, որն այսօր դարձել է ինչպես սփյուռքահայ, այնպես էլ հայրենի ու լիբանանահայ մտավորականության արժեքավոր հողվածների, ստեղծագործությունների շաբաթաթերթը, այն ներկայացնելով որպես Լիբանանի եւ Հայաստանի ազգային անվտանգությանը սպառնացող վտանգ: Հետաքրքրական է, որ ստալինաբերիական «ոճով» որպես «ժողովրդի թշնամի» ամբաստանվող հողվածագիրներից շատեր բարձրագույն մեղալիների ու պարզեւների են արժանացել ինչպես Հայաստանի, այնպես էլ Լիբանանի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Միքիլայի իշխանությունների կողմից: Լիբանանի իշխանությունների «այքը բացող» այդ ստոր մատնության գլխավոր հեղինակները ֆինանսական ավազակությունների, կուսակցության թե պետական ինչքը թալանած ու բանտ «նստած» անձինք են, որոնք Վահան Թեքեյանի, Հովհաննես Պողոսյանի, Գերսամ Ահարոնյանի, Հակոբ Ավետիսյանի, Պարույր Աղաջյանի փառապանծ «Զարթոնքը» դարձրեցին էժանագին հայտարարությունների թերթուկի, ամեն կարգի դավերով, այդ երբեմնի հիանալի թերթից հեռացնելով աշխարհասփյուռ հայության մեջ մեծ հեղինակություն վայելող լրագրողների: Նրանց նմանատիպ վերջին փորձը, 20 տարի առաջ, Մայր հայրենիքի լավագույն թերթերից «Ազգ»ը զավթելու ձախողությունը, շնորհիվ Հայաստանի մտավորականության խիզախ կեցվածքին եւ Հայաստանի արդարադատության:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ 20-10-2017

Թերթ փակելու «արվեստը».

Հակոբ Ավետիսյան



Մփյուռքահայ մամուլի, ընդհանրապես հայկական մամուլի մասին խոսելիս, մանավանդ երկար կյանք ապրած թերթերին անդրադառնալիս, մենք սովորաբար բավարարվում ենք դրանց ստեղծման թվականի, վայրի, առաջին խմբագրի անունը նշելով, անշուշտ չնոռանալով ընդգծել նաեւ, դեռեւս գործող թերթերի պարագայում, ներկայիս խմբագրի անունը, եւ վերջ: Այնինչ գուտ մատենագիտական այդ տվյալներից անդին գոյություն ունի, ունեցել է, մի ամբողջ կենսագրություն ամենօրյա,

ամենժամյա տվյալանքներով լեցուն, որը սփյուռքահայ երկարակյաց թերթերի պարագայում կուսակցական, համայնքային կամ անհատական կենսագրությունից անդին ազգի, հայրենիքի ու պետության կենսագրությունն է արձանագրում նաեւ:

Դրանցից մեկը 1899 թ.ին Բոստոնում ծնունդ առած եւ 1923 թ.ին «Պայքար» անունով հանդես եկող թերթն է, որը որոշ կարճատեւ թե տեւական ընդհատումներից հետո ընթացիկ տարեշրջանի սկզբից ի վեր, շնորհիվ Երվանդ Ազատյանի, Հակոբ Վարդիվառյանի, Վարդան Նազիրյանի եւ այլ նվիրյալների ջանքերի, վերստին սկսեց լույս տեսնել միաժամանակ Լոս Անջելեսում եւ Բեյրութում, որպես պաշտոնաթերթ Ռամկավար Ազատական կուսակցության: Շատ կարճ ժամանակում շաբաթաթերթը դարձավ սփյուռքահայ մտավորականության ամբիոն, ռամկավար եւ ոչ ռամկավար մտավորականների պատմաբանների, հասարակագետների, քաղաքագետների, մշակութային գործիչների, կրթական մշակների, գրողների եւ արվեստագետների հանդիպման վայր: Դրանով իսկ ապացուցվեց, որ արդար ու տեղին էր 118 տարեկան «Պայքարին» 3-րդ շնչառություն տալու նախաձեռնությունը: Մինչ այդ, սփյուռքահայ բազմաթիվ մտավորականներ, հատկապես հրապարակախոսական մեծ ավանդույթներ ունեցող լիբանանահայ գաղութում, գրկված էին ազատ ամբիոն ու խոսափող ունենալու հնարավորությունից: Ճիշտ է, գաղութում գործում են ռամկավար «Զարթոնքը», հնչակյան «Արարատը», դաշնակցական «Ազդակը» եւ այլ կուսակցական, միութենական եւ հարանվանական թերթեր, սակայն գոնե առաջինի «Զարթոնքի» մասին խոսելով պետք է ասել, որ երբեմնի այդ հզոր թերթը մի քանի տարի արդեն գրկվել է մտավորական հրապարակագիրներից եւ աշխատակիցներից կիսագրագետ խմբագրի շահադետ ու նեղմիտ վարմունքի, թերթը հովանավորողների եւ հատկապես գլխավոր հովանավորի բառի իսկական առումով հակամամուլ գործունեության պատճառով, որի հետեւանքով ոչ միայն «Զարթոնքը», այլեւ 1956 թ.ից Զարեհ Մելքոնյանի եւ Օննիկ Սարգսյանի հրատարակած «Շիրակ» մշակութային-գրական ամսագրի գլխավոր խմբագիրները համապատասխանաբար Պարույր Աղաջյանը եւ Ժիրայր Դանիելյանը հրաժարվեցին իրենց պաշտոնից, եւ օրաթերթը մեկուկես տարով դադարեց հրատարակվելուց, իսկ ամսագիրը փակվեց ընդմիշտ: Ի դեպ, նույն այդ գլխավոր հովանավորը ժամանակին, 1996 թ.ին, փորձել էր փակել տալ նաեւ մեր թերթը՝ «Ազգ»ը եւ Հայաստանից հեռացնել նրա խմբագրին, ինչը չհաջողվեց նրան հայրենի մտավորականության եւ մամուլի գործիչների պինդ եւ միահամուռ կեցվածքի շնորհիվ: Այսինքն, այս մարդու սովորությունն է, խասայ թն է թերթ փակելը:

Հետեւաբար բոլորովին պատահական չէ, որ օրերս, օգտագործելով իր հովանավորյալի անարժանաբար «Զարթոնքի» խմբագրի աթոռին նստած կիսագրագետի դավադրողական տաղանդը, գլխավոր հովանավորը վերջինիս մղել-քաջալերել է Լիբանանի արաբական «Ալ Նաշրա» կայքում տեղադրել տալու մի գրապարտագիր «Պայքար» շաբաթաթերթի դեմ, վերջինիս վերագրելով «մահացու 7 մեղքերը», որոնց թվում ներլիբանանյան համակեցությունը խանգարելու, մամուլի մասին լիբանանյան օրենքը խախտելու, Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսի նկատմամբ թշնամանք հրահրելու, անգամ Հայաստանի Հանրապետության դեմ քարոզչական պայքար մղելու եւ բարեկամ երկու երկրների միջեւ հարաբերությունները սրելու վերաբերյալ: Սառը պատերազմի կամ ստալինյան օրերի հատուկ մի մատնչագիր, որի նպատակը ավելի քան պարզ է՝ դրդել լիբանանյան համապատասխան իշխանություններին սանկցիաներ կիրառելու, ընդհուպ փակելու «Պայքարը», որն իր հավասարակշիռ եւ լուրջ բովանդակությամբ լրիվ է նսեմացնում «Զարթոնքին» եւ ոչ միայն: Այնինչ, թերեւս կարիք չկա նշելու, «Պայքարի» ցարդ լույս տեսած 42 համարների էջերը ապացուցում են խմբագրակազմի խիստ լոյալությունը (ինձ թվում է չափազանցված) թե՛ երկու երկրների իշխանությունների, թե՛ Արամ Ա կաթողիկոսի, թե՛ հայկական տարբեր կազմակերպությունների նկատմամբ:

Ուստի ակնկալվում է հայրենի մտավորականության եւ պետական իշխանությունների, ինչպես նաեւ սփյուռքահայ մտավորական ու եկեղեցական շրջանակների ազդու միջամտությունը ի պաշտպանություն կարեւոր եւ անհրաժեշտ այդ թերթի «Պայքարի»:

Մակայն զգո՛ւյ՛, այդ մարդիկ տիրապետում են թերթ փակելու «արվեստին»:

«ԱԶԳ»

Փոխանցում Առաջին Հանրապետութենէն Երկրորդ Հանրապետութիւն 1918-1921

Հայաստան կը համարուի անվիճելի մասը Սովետական Ռուսաստանի, իր մէջ ունենալով Երեւանի նահանգը, Կարսի շրջանը, եւ Թիֆլիսի նահանգին մէկ մասը՝

Ալեքսանդրապոլի Համաձայնագիր

Դեկտեմբեր 2, 1920

Դոկտ. Զաւէն Ա. Քինյ. Արզումանեան

Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը (1918-1921)

Հայթօրքական պատերազմին հետեւանքով ծայր աստիճան վատթարացած էր դրութիւնը Հայաստանի առաջին Հանրապետութենէն ներս: Պարենային ճգնաժամը, գաղթականներու վիճակը, հիւանդութիւնն ու սովը կը սպառնային երկրի գոյութեանը: 1920 նոյեմբեր 10-ին Երեւանի քաղաքային արտա-կարգ նիստի ընթացքին յայտարարեցին որ քաղաքը միայն երկու օրուան հաց ունէր բնակչութեան բաժնելու համար: Երկիրը այդ ծանր դրութենէն դուրս բերելու միակ կերպը պետական կառոյցի բարեփոխումը պիտի ըլլար, այսինքն Հանրապետութեան դաշնակցական ղեկավարութեան հրաժարումը եւ նոր իշխանութեանց գլուխ անցնիլը: Նման փոփոխութիւն մը կը պարտադրուէր թէ՛ արտաքին քաղաքականութենէն եւ թէ՛ ներքին Խորհրդային համայնավար կարգէն որ սպրդած էր Հայաստանէն ներս, սկիզբ առնելով Ռուսաստանէն, որ տապալած էր Ռուսական Կայսրութիւնը եւ հաստատած Սովետական միապետութիւնը՝ 1917 թուի յեղափոխութեան նէն ետք:



Ներքին Ընդդիմութիւն

Համայնավարներու կազմակերպութեամբ Հայաստանի դաշնակցական իշխանութեան դէմ գործադուլներ ծաւալեցան ու երկիրը անշարժութեան մատնեցին: 1920 սեպտեմբերէն նոյեմբեր, Զանգեզուրի մէջ Սովետական Կարմիր Բանակի զօրամասեր սկսան յառաջանալ նոր իշխանութիւնը հաստատելու նպատակով, սակայն անոնց դէմ խիզախ օրէն դիմադրեցին Հանրապետութեան կառավարութեան զինեալ հայ ուժերը եւ յաջողեցան գրաւել Ղափանն ու Միսիանը, եւ շուտով նաեւ Գորիսը, պարտութեան մատնելով համայնավարները:

Զանգեզուրը մինչեւ 1921 յուլիս մնաց Հայաստանի Հանրապետութեան ղեկավարութեան ձեռքը, սակայն անդին Երեւանի մէջ նոր շարժումը կը թափանցէր աշխատանքային խաւէն ներս, եւ հոկտեմբեր 7-ին կոչ կ'ընէին տապալելու դաշնակցական կառավարութիւնը: Ամիս մը ետք Խորհրդային իշխանութեան Հայաստանի ի նպաստ պայքարը իր գագաթնակէտին հասաւ: Ժողովրդական համակրութիւնը յարեցաւ նոր գաղափարաբանութեան, քայքայելով Հայաստանի պետական դիմադրութիւնը: Նոյեմբեր 6-ին Շիրակի մէջ Սովետական իշխանութիւնը ինքզինք պարտադրեց եւ Ալեքսանդրապոլի մէջ ստեղծուեցաւ ռազմական ջոկատ, իսկ 7-ին հոկտեմբերեան յեղափոխութեան տարեդարձի օրը, Հայաստանի բանուորները գործադուլ յայտարարեցին եւ հակակառավարական ցոյց կատարեցին:

Հարկադիր Կողմնորոշում

Ճգնաժամային այս պայմաններուն տակ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Համո Օհանջանեան իր պետական կազմով թուրքերուն հետ հաշտութեան փորձ ընել ստիպուեցաւ, մինչ անդին Դրոյի եւ Վրացեանի խումբը ցոյց կուտային Սովետական կողմնորոշում: Ամէն փորձ սակայն ձախողելով, նոյեմբեր 24-ին Օհանջանեանի դաւիժը կը հրաժարէր, եւ վերջին ճգնաժամային օրերուն Սիւնն Վրացեանի վարչապետութեամբ նոր կառավարութիւն մը կը կազմուէր: Նոյեմբեր 29-ին Հայաստանի քաղաքական դրութիւնը վերջնական փոփոխման կ'ենթարկուէր՝ Հանրապետութենէն դէպի Խորհրդային դայնացում:

Ալեքսանդրապոլի Դեկտեմբեր 2ի Համաձայնագիրը

Յաջորդ օր նորահաստատ իշխանութիւնը իր պաշտօնական

յատարարութիւնը կ'ուղարկէր Թուրքիոյ, ազդարարելով որ անյապաղ դադրեցնէր Ալեքսանդրապոլի մէջ նոյն օրերուն կնքուելիք դաշինքը դաշնակցական պետերուն հետ: Դիմադրութիւն այլեւս կարելի չէր եւ Հայաստանի Հանրապետութեան Երեւանի ղեկավարները ստիպուած էին հրաժարիլ եւ կառավարութիւնը յանձնել Սովետական ուժերուն՝ բանակցութեամբ ընդմէջ անոնց եւ պետական ներկայացուցիչներ Դրոյի եւ Համբարձում Տէրտերեանի: 1920 թուի Դեկտեմբեր 2-ին սոյն բանակցութիւնները յանգեցան որոշ համաձայնութեան մը որ յայտնի է որպէս Ալեքսանդրապոլի Համաձայնագիր որուն առաջին յօդուածով դաշնակցականները կը ճանչնային Հայաստանի խորհրդայնացումը:

Համաձայնագրին յաջորդ յօդուածով կ'որոշուէր որ մինչեւ Հայաստանի նոր իշխանութեանց համագումարը Հայաստանի իշխանութիւնը անցնէր Յեղափոխական Կոմիտէին ձեռքը: Յատուկ յօդուածով մը յիշեալ Կոմիտէի նախարարական կազմին մաս պիտի կազմէին դաշնակցականներէն երկու անձինք: Այլ յօդուածով մըն ալ Հայաստանի աշխարհագրական տարածքը կը ճշդուէր, որով երկիրը կը համարուէր անվիճելի մասը Սովետական Ռուսաստանի, ներառեալ Երեւանի նահանգը, Կարսի շրջանը, Զանգեզուրը, Ղազախի գաւառի մէկ մասը եւ Թիֆլիսի նահանգին մէկ մասը:

Վերջին 8-րդ յօդուածով կ'ըսուէր թէ ներկայ համաձայնագիրը ստորագրելուց յետոյ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը հեռանում է իշխանութիւնից, որով ժամանակաւորապէս իշխանութիւնը կ'անցնէր զինուորական հրամանատարութեանը, այսինքն բանակի հրամանատար Դրոյի եւ Սովետական Ռուսիոյ քոմիսար Միլինին: Դեկտեմբեր 6-ին Կարմիր Բանակի 11-րդ զօրաբաժինը Երեւան կը մտնէր ամբողջացնելով Հայաստանի խորհրդայնացումը:

Փետրուարեան Ապստամբութիւնը

1921ին, երբ փաստօրէն Հայաստանի իշխանութիւնը անցած էր համայնավարներուն ձեռքը, ու երկիրը դէպի Սովետական Հանրապետութիւն կը դիմէր, դաշնակցական նախկին ղեկավարները դիմեցին զինեալ խռովութեան որպէսզի կարենային վերականգնել իրենց տիրապետութիւնը: Քաղաքացիական կռիւի վերածուող այդ խլրտումները սկսան 1921 փետրուար 18-ին եւ տեւեցին մինչեւ ապրիլ 2, երբ Հանրապետական հայ զինեալ ջոկատներ Զանգեզուրէն յարձակում գործեցին այժմեան Եղեգնաձորին վրայ, գրաւելով Դարալագեազն ու Նոր Պայազիտը: Փետրուար 18-ին հայկական զօրքեր յարձակեցան ուղղակի Երեւանի վրայ ուր յամառ կռիւներ տեղի ունեցան, գերակշիռ դիրք գրաւեցին եւ կազմեցին Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն՝ զլիսաւորութեամբ նախկին վարչապետ Սիւնն Վրացեանի: Դժբախտաբար եղբայրասպան կռիւներու հետեւանքը ծանր եղաւ: Վրացեան ստիպուած 1920 թուի դեկտեմբեր 2ի Համաձայնագրին մէկ յօդուածով, յաջորդ տարուան մարտ 21ին դիմեց թուրք կառավարութեան՝ ռազմական օգնութիւն խնդրելով, սակայն Թուրքիա մերժեց չուզենալով խախտել այդ օրերին կնքուած Սոսկուայի պայմանագիրը եւ վատթարացնել Ռուսաստանի հետ հաստատած իր յարաբերութիւնները:

Հակառակ դաշնակցական հայ զօրքերու բռուն յարձակումներուն, Սովետական ուժերը հակադարձեցին եւ ազատագրեցին Նոր Պայազիտը, Ախտան, Ապարանը, Աշտարակը, եւ 1921 ապրիլ 2-ին Երեւան մտան, ազատագրելով Էջմիածինը, Բասարգէչարն ու Դարալագեազը: Ամէն պարագայի սակայն դաշնակցականներ մերժեցին զինաթափ ըլլալ, թէեւ ի վերջոյ փախուստ տուին Երեւանէն, իրենց հետ տանելով պետական գանձը, վերջին ճիգով մըն ալ սպանդ յառաջացնելով չորս կողմ: Անոնք նոյնիսկ կարողացան պահ մը Հայաստանի հարաւը՝ Զանգեզուր ապաստանելով Ինքնավար Միւնիքի Հանրապետութիւնը հռչակեցին՝ Գորիս մայրաքաղաքով, խորհրդարանով, եւ նախարարներով՝ Գարեգին Նժդեհի ղեկավարութեամբ: Յարաբերութիւն մշակելով Թավրիզի հետ, դաշնակցականներ օգնութիւն ստացան անգլիացիներէն, պարսիկներէն եւ թուրքերէն, յուսալով որ պիտի կարենային նոր յարձակումներով պաշտպանել հայրենիքը եւ տապալել Սովետական տիրապետութիւնը, սակայն ի գուր: Սովետներուն կը մնար ազատագրել Զանգեզուրը որ տակաւին դաշնակցականներուն ձեռքն էր:

1921 յուլիս 13-ին Կարմիր Բանակի զօրամասերը վերջնականապէս դադրեցուցին դաշնակցականներու դիմադրութիւնը որոնք Զանգեզուրէն հեռանալով ապաստանեցան Պարսկաստան եւ մեծաւոր արեւելք, ուր շարունակեցին իրենց պայքարը Սովետական իշխանութեանց դէմ:

Պայքար շարաթաթերթ, դրօշակակիր պաշտօնաթերթ Ռամկավար Ազատական կուսակցութեան

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպած է Գերմանիոյ նախկին նախագահին հետ

Հոկտեմբեր 19-ին Եւրոպայի մէջ Բարեկարգութեան 500-ամեայ յորելեանի յիշատակութեան ձեռնարկներու ծիրէն ներս՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը պաշտօնական ընդունելութեամբ հանդիպած է Գերմանիոյ Դաշնային Հանրապետութեան նախկին նախագահ Եռհակիմ Կաուքի հետ:



Նորին Սրբութեան կ'ուղեկցէին Գերմանիոյ հայոց թեմի առաջնորդ, Կոստանդնուպոլսոյ Հայոց պատրիարքութեան պատրիարքական տեղապահ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Պեքճեանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալպանտեանը եւ Գերմանիոյ հայոց թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Սերովբէ վարդապետ Իսախանեանը:


Վեհափառ Հայրապետը իր ուրախութիւնը յայտնեց Գերմանիոյ Պուստեթալի կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման գործին մէջ իր կարեւոր ներդրումը բերած Գերմանիոյ նախկին նախագահին հետ հանդիպման առիթով:

Նորին Սրբութիւնը Ե. Կաուքին նաեւ ներկայացուց անկախութենէն ետք ժողովուրդի հոգեւոր վերագարթօնքի ու Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ ձեռքբերումներու համառօտ պատկերը, ինչպէս նաեւ Հայոց Եկեղեցւոյ ծաւալած գործունէութիւնը միջեկեղեցական ու միջկրօնական ոլորտին մէջ:

Ձրոյցի ընթացքին ընդգծուած են քրիստոնէական արժէքներու հոգեւոր ու մշակութային կարեւորութիւնը եւ ատոնց հանդէպ հաւատարմութիւնը հասարակութիւններու կեանքին մէջ:

ՀՀ Վարչապետը ընդունած է Հայաստանի Հանրապետութեան մէջ ՌԴ դեսպանը

Հանրապետութեան վարչապետ՝ Կարէն Կարապետեան, Հոկտեմբեր 19-ին, ընդունած է Հայաստանի մէջ Ռուսիոյ դեսպան Իվան Վոլինզիւնը: Զրուցակիցները անդրադարձած են հայ-ռուսական դաշնակցային յարաբերութիւններու ընթացիկ օրակարգին:



ՀՀ կառավարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութեան տեղեկութիւններով՝ Կարէն Կարապետեան եւ Իվան Վոլինզիւնը կարեւոր համարած են երկու երկիրներուն միջեւ տնտեսական համագործակցութեան յետագայ զարգացումն ու ընդլայնումը, եւ այդ ծիրէն ներս՝ քննարկած առեւտրաշրջանառութեան ծաւալներու աւելացման առնչուող հարցեր:

Քննարկուած են նաեւ Ռուսիոյ Դաշնութեան վարչապետ Տմիթրի Մետվետեի՝ յառաջիկային Հայաստանի Հանրապետութիւն նախատեսուող պաշտօնական այցին, ինչպէս եւ ՀՀ-ի մէջ իրականացուելիք Եւրասիական միջկառավարական խորհուրդի նիստին վերաբերող հարցեր:

ԵՆԽՎ-ի քիւրոն կոչ ուղղած է Ատրպէյճանը դուրս դնելու Մարդու Իրաւունքներու եւրոպական դատարանի կազմէն

Եւրոպական խորհուրդի Խորհրդարանական վեհաժողովի քիւրոն կոչ ուղղած է անյապաղ հեռացնելու Ատրպէյճանը Մարդու Իրաւունքներու եւրոպական դատարանի կազմէն՝ նկատի ունենալով այն փաստը, որ այդ երկիրը չի կատարեր դատարանին որոշումները:

ԵՆԽՎ-ի կայքին մէջ հրապարակուած հաղորդագրութեան համաձայն, Ատրպէյճան կը շարունակէ չկատարել «Իլկար Մամետովը ընդդէմ Ատրպէյճանի» գործով՝ դատարանին տուած դատավճիռը, ինչ որ պատճառ դարձած է, որ ԵՆԽՎ-ի քիւրոն Ատրպէյճանը Մարդու Իրաւունքներու եւրոպական դատարանի կազմէն հանելու կոչով հանդէս գայ:

Եւրոպական կառոյցները բազմիցս պահանջած են Ատրպէյճանէն ազատ արձակել Իլկար Մամետովը, սակայն, անտեսելով բոլորը, իշխանութիւնները «Ռէլ» շարժման առաջնորդը կը շարունակեն կալանքի տակ պահել:

Յայտնենք, որ Մամետով մեղադրուած է Յունուար 2013-ին Իսմայիլի անկարգութիւնները կազմակերպելու համար եւ դատապարտուած է 7 տարուան ազատազրկման: 2014-ին Մարդու Իրաւունքներու եւրոպական դատարանը կոչ ուղղած էր Ատրպէյճանին՝ ազատ արձակելու Մամետովը, սակայն դատարանին այս որոշումը չէ իրականացած:

ՇՆՈՐՀԱԻՈՐԱՆՔ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը, Երեւան մայրաքաղաքին մէջ 25 Սեպտեմբեր 2017-ին իրենց պատգամաւորական ժողովին ընտրած են նոր կեդրոնական վարչութիւն մը, հետեւեալ անդամներով:

- Համբիկ Սարաֆեան - «Ատենապետ» - Միացեալ Նահանգներ
- Վազգէն Համալեան - «Փոխ ատենապետ» - Սուրիա
- Նարեկ Գալստեան - «Քարտուղար» - Հայաստան
- Յակոբ Տիգրանեան - Կիպրոս
- Շաւարշ Ակինեան - Գանատա
- Մանո Շիրումեան - Հայաստան
- Ալեքսան Քեօզլեքեան - Լիբանան
- Կիրակոս Թիթիւնճեան - Գանատա
- Ճորճ Յակոբեան - Միացեալ Նահանգներ
- Թադէոս Գորոյլեան - Միացեալ Նահանգներ
- Գեորգ Սաչլեան - Ֆրանսա

Յունաստանի Ռ.Ա.Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը կը շնորհաւորէ նորընտիր անդամները եւ իրենց կը մաղթէ ազգաշէն գործունէութիւն:

Մեքսիքացի Պատգամաւորները Ծիծեռնակաբերդի Մէջ Յարգեցին Ցեղասպանութեան Զոհերու Յիշատակը

Մեքսիքայի խորհրդարանի պատգամաւորներ Պլանքա Մարգարիտա Քուաթա Տոմինկեսը, Մարիա Քրիսթինա Թերեզա Կարսիա Պուաոն, Քառլոս Էռնանտես Միրոն Հայաստանի Ազգային ժողովի նախագահի տեղակալ Էդուարդ Շարմազանովի եւ ՀՀ ԱԺ ապագամաւոր Մարգարիտ Եսայեանի ուղեկցութեամբ 22 Հոկտեմբերին այցելած են Ծիծեռնակաբերդի յուշահամալիր:



Ինչպէս կը տեղեկացնէ ՀՀ Ազգային ժողովի հասարակայնութեան եւ տեղեկատուութեան միջոցներու հետ կապերու վարչութիւնը, մեքսիքացի խորհրդարանականները ծաղիկներ խոնարհած են անմար կրակին մօտ եւ լուծեամբ ու խոնարհումով յարգած Սուրբ նահատակներու յիշատակը:

Հիւրերը եղած են նաեւ Հայոց Ցեղասպանութեան թանգարան-հիմնարկ, ծանօթացած Հայոց մեծ եղեռնը հաւաստող փաստաթուղթերուն եւ վաւերագիրներուն, դիտած ցուցանմուշները, գրառում կատարել յուշամատենին մէջ:

Մեքսիքա-Հայաստան բարեկամական խումբի ղեկավար Պլանքա Մարգարիտա Քուաթա Տոմինկես նշած է. «Ինձի համար պատիւ էր այցելել այս մեծ երկիրը, ճանչնալ հերոսական ժողովուրդը, որ մեծ յարգանք կը վայելէ աշխարհի մէջ: Ես արդէն կը սիրեմ Հայաստանը»:

Մարիա Քրիսթինա Թերեզա Կարսիա Պուաոն նշած է. «Մեր համակրանքն ու համերաշխութիւնը կը յայտնեն հայ ժողովուրդին»:

«Ատելութիւնը ձայնողման ճանապարհն է», - նշած է Քառլոս Էռնանտես Միրոն եւ աւելցուցած, որ մարդկութիւնը կ'աջակցի եւ կը մեծարէ հայ ժողովուրդը:

ՌԱԿ Երիտասարդական Շարժման համաժողով

Սեպտեմբերի 17-ին Երևանում տեղի ունեցավ ՌԱԿ երիտասարդական անդրանիկ հավաքը

Հավաքին մասնակցում էին Հայաստանի և Սփյուռքի կուսակցականներ, ՌԱԿ Գերագույն խորհրդի և Կենտրոնական վարչութեան անդամներ, բազմաթիվ նորագիրներ:



Երիտասարդական հավաքը մի շարք նպատակներ էր հետապնդում, որոնցից են մարզերում և համայնքներում ՌԱԿ երիտասարդների շրջանում առկա խնդիրների բարձրաձայնում, առաջարկվող համապատասխան լուծումներ, դրանք իրագործելու մեթոդների արձանագրում:

ՄԵՐ ԵՐԱՆՏԱԻՈՐՆԵՐԸ

ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Շուշի, Ապրիլ 29, 1855 - Թիֆլիս, Յուլիս 11, 1918

Յակոբ Վարդիվառեան

Եթէ մի հրապարակախօս, մի հասարակական գործիչ աշխատում է դուր գալ ամենքին, ժողովրդական լինել ամենքի համար, չունենալ հակառակորդներ, երկու եւ երեք աթոռների վրայ նստել, պարզ է որ նա չունի անսասան հաւատ, անդորուելի համոզումն իր վրայ վերցրած միսիայի, իր գաղափարների համար: Անկասկած, անաչառ պատմությունը կը գնահատէ ըստ արժանւոյն նրան, ով վախկոտութեամբ, թուլամորթութեամբ խոյս չի տար կռուի դաշտից:



ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Ռամկավար Ազատական Կուսակցությունը եւ 1921-էն առաջ գոյություն ունեցող սկզբնական շառաիղները որ գաղափարական միասնութեան կոչեցին արդի ՌԱԿը, հաւաքաբար ունին դիցազնական արարքներ եւ իրագործումներ:

Մասնաւորաբար անհատ ղեկավարներ գրչի եւ զենքի մարտերով ժամանակակից մեր պատմությունը հարստացուցած են դաստիարակիչ հերոսապատմամբերով - Արփիարեան, Տամատեան, Եկարեան, Ետրուպեան, Պապաջանեան, Առաքելեան եւ բազում ուրիշներ մեր կուսակցութեան պատմությունը բեղմնաւորած ու լուսաւորած են իրենց անձնուէր կեանքերով:

Դժբախտաբար կուսակցությունը, իր չափաւորական բնաւորութեամբ եւ գուցէ նաեւ՝ հարկադրանքով չէ յաջողած կերտել հեքիաթներ եւ առասպելներ իր մեծերուն կեանքին եւ անունին շուրջ:

Պարզ փաստագրումը անոնց կեանքին ու գործունէութեան պիտի հանդիսանար մեր ազատագրական պայքարի ամենէն նշանակալի օղակներէն մէկը:

Բարեբախտաբար մնացած են յուշագրություններ անհրաժեշտօրէն պէտք է բերուին մեր պատմութեան մայր հոսանքին:

Պիտի ջանանք այս էջերէն պարբերաբար ոգեկոչել այդ մեծամեծները, ոգեւորելու համար նոր սերունդը անոնց օրինակով, բայց մանաւանդ արդարություն ընելով անոնց անմեռ յիշատակին:

Ահաւասիկ այսօր այդ մեծ «երախտաւորներ»էն մէկը, Համբարձում Առաքելեան:

ԽՍԲ. ԱՊԱԳԱՅ

ԿԵԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

Օնած է Ապրիլ 29, 1855 Շուշի: Հօր անունը՝ Աստուածատուր է եղած: Նախնական կրթությունը ծննդավայրին մէջ ստանալէ ետք, տաս տարեկանին կ'անցնի Թարիզ հօր մօտ՝ շարունակելու իր ուսումը Թարիզի Արամեան վարժարանէն ներս: Այնուհետեւ կը հետեւի յայտնի հայկաբան Սամուէլ Գիւլգաղեանի դասերուն եւ ի վերջոյ զայն կը շարունակէ դարձեալ Շուշիի մէջ, ինքնաշխատութեամբ:

1872-ին կը սկսի աշխատակցիլ «Մեղու Հայաստանի» եւ «Մշակ»ին՝ պարսկահայոց կեանքէն թղթակցություններ դրկելով: Թարիզի մէջ կը հիմնէ առաջին ազգային ընթերցարանգրաստունը, որ երկար ժամանակ կը ծառայէ տեղւոյն հասարակութեան:

1878-ին կ'անցնի Պաքու, որուն ռեալական ուսումնարանը՝ ճիւղաւորուելով 1879-ին ւարտելով կ'ընդունուի Մոսկուայի երկրագործական «Պետրովսքի-Բազումովսքի» երկրագործական ուսումնարանը, որ կ'իսատ թողած է հօրը վերահաս սպանութեամբ (թուրքերու ձեռքով) եւ կը վերադառնայ Կովկաս 1881ին:

ԱՐԴԷՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ ՆԵՐՍ

1892-ին տեսուչ կը նշանակուի Ղարաբաղի հայոց երկսեռ դպրոցներուն: Նոյն տարին Շուշիի մէջ կը հիմնէ «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան» (Կ.Հ.Բ.Ը.) անդրանիկ մասնաճիւղն ու ընթերցարանը, եւ վեց տարի շարունակ (1892-98) վարած է նոյն Ընկերութեան ընդհանուր քարտուղարի պաշտօնը: Երկու անգամ եղած է Պետական տումաներու անդամ՝ 1906 եւ 1907 տարիներուն, ներկայանալով քատէթ կուսակցութեան կողմէ:

Թիֆլիսի մէջ, Գաբրիէլ Միրզայեանցի եւ Օր. Ն. Տէր-Մարկոսեանի հետ հիմնած է Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերությունը եւ մեծագոյն սատարը հանդիսացած անոր բեղմնաւոր գործունէութեան:

Առաքելեան բազմաթիւ անգամներ որպէս պատգամաւոր մասնակցած է Մայր Աթոռի կաթողիկոսական ընտրություններուն: 1892-98-ին քարտուղար կը նշանակուի Կ.Հ.Բ. Ընկերութեան եւ վարիչը՝ մատենադարանի: Անոր ազգային ծառայությունը կը տարածուի նաեւ թիֆլիսահայ կրթական կեանքէն ներս դառնալով՝ քաղաքի Գայիներէն եւ Յովնանեան դպրոցներու հոգաբարձու: Նաեւ՝ Կովկասեան Ժողովրդական համալսարանի Հայկական ակումբի նախագահ, Թիֆլիսի քաղաքապետութեան անդամ եւ հայ նպաստամատոյց ընկերություններու անդամ:

Աշխատակցած է կովկասահայ եւ պոլսահայ մամուլին, սկսած իր պատանեկան հասակէն: Գրած է նաեւ օտար մամուլին մէջ:

ՀԱՅ ԴԱՏԻ ՆՈՒԻՐԵԱԼ ԳՈՐԾԻՉԸ

Առաջին անգամ Առաքելեան կը հանդիսանայ կովկասահայ գործիչներէն մին, որ կը մտածէ հայկական հարցը քննարկութեան առարկայ դարձնել Խաղաղութեան Համաժողովին: 1902ին Փարիզ, իսկ 1901ին Կլասկօ գումարուած նոյն գոնկրէսներուն ան կը ներկայացնէ La question armenienne au point de vue de la paix universelle վերնագրով ընդարձակ տեղեկագիրներ՝ որոնց հիման վրայ յոյժ կարեւոր որոշումներ քուէարկուելով կը հաղորդուին մեծ պետութիւններուն:

Մասնակցած է Եւրոպական եւ Միջազգային գիտական ժողովներու, ներկայացնելով անոնց՝ մեր եկեղեցիին, պատմութեան, գրականութեան եւ այլ մասերու զեկուցադրեր, որոնք զանազան լեզուներով թարգմանուելով տպագրուած են գրական եւ պարբերական մամուլին մէջ: 1905ին Հռոմ հրատարակուած Dictionaire internationale Ecrivainsի մէջ իր իւրաքանչեւ տեղը կը գրուէ Առաքելեանի անունը:

1915-ին հիմնած ու գլխաւորած է հայ գաղթականներու օժանդակող յանձնաժողովը: Գաղթականներ, որոնք ընդհանրապէս կու գային Վանէն ու Արեւմտեան Հայաստանէն, գործակցելով Արմենական եւ Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան ծանօթ անուններուն՝ Դարբինեանին, Գույումճեանին եւ այլոց հետ: 1917-ին կը հիմնէ «Հայ ազգաբնակչութեան մէջ գրագիտություն տարածելու ընկերություն»ը:

Առաքելեանի աշխատանքը զուգահեռաբար կ'ընդհանար Արփիարեանի հետ, ծանօթացնելու հայոց իրաւունքները միջազգային ատենաներու մօտ:

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԷՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Առաքելեանի հասարակական գործունէութեան լրացուցիչ մէկ մասը, պակասումը պէտք է նկատել կովկասահայ Ժողովրդական Կուսակցությունը: 1917-ին Առաքելեան հիմնադիրներէն մէկը կը դառնայ Հայ Ժողովրդական Կուսակցութեան: Ինք հանդիսացաւ մեծագոյն սատարը կովկասահայութեան մէջ տարածելու ազգայնական-ռամկավարութեան սկզբունքները, որոնց կորովի եւ խիզախ, անվարան եւ հաւատարիմ քարոզիչը եղած է, իբր միջոց գործածելով իր այնքան սիրած ու սիրուած «Մշակ»ը, որուն շուրջ կը բոլորուէին ժողովրդական դասակարգերու համակրությունները, հմայուած իր հզօր եւ անյուսահատ հրապարակագրութեանէն, անոր գլխաւոր յատկանիշները եղած են ողջմտութիւն, հեռատեսութիւն եւ անաչառ անկեղծութիւն:

Առանց դոյզն վարանումի, եւ առանց ամենափոքր շեղումի, բարձրադասակ եւ խստօրէն քննադատած է ու գնահատումի ենթարկած մեր ազգային կեանքի բոլոր իրադարձությունները, ինչպէս վայել է հզօր նկարագրի տէր անհատականութեան մը. երբեք տեղի տուած չէ իր խիզախումներուն մէջ, երբ համոզուած է թէ ազգային շա' հն է որ կը պահանջէ հարուածել, եւ անխնայ կերպով, ամէն զեղծուած իշխանութիւն կամ թիւր ըմբռնում:

Իր այս խիզախ գնացքը երբեք ազդուած չէ, եւ ո՛չ ալ ընկճուած իր յառաջացող տարիքի ծանրութեանէն: Ու ան՝ իր ալեհեր հասակին մէջ ալ, ինչպէս երիտասարդութեան, դարձած է անպարտելի՝ պատուհասը պահպանողական հաւատալիքներու, եւ մասնաւորաբար Հ.Յ.Դաշնակցութեան որուն ուղղած թունաւոր սլաքները անգօր եւ ապարդիւն մնալու դատապարտուած էին Առաքելեանի կրանիթեայ նկարագրին եւ անյաղթելի կորովին առջեւ:

Հակառակորդներու կուսակցամոլ ատելութեանէն արձակուած եղբայրասպան ու դաւաճան գնդա կը միայն լռեցուց այդ մեծ Ձայնը:

Արեւելահայ ազատական հոսանքը առաջին անգամ երբ կը կազմակերպուի 1905-ի ռուսական յեղափոխութեան ընթացքին իբրեւ հայկական թելը համառուսական Սահմանադրական Դեմոկրատ կուսակցութեան, որ ինքզինք «Ժողովրդական Ազատութեան Կուսակցություն» կ'անուանէր եւ որ այնուհետեւ ծանօթ դարձաւ նաեւ «Քատէթ» անունով: Այս կուսակցությունը կը դաւանէր ցարական կայսրութեան բոլոր ժողովուրդներուն ազգային անկաշկանդ զարգացման իրաւունքը:

Այս հիման վրայ, գլխաւորաբար «Մշակ»ի հիմնադիրներն ու համակիրները կազմեցին ինքնուրոյն հայկական կուսակցություն մը, որ կոչւեցաւ «Հայկական Դեմոկրատական Կուսակցություն», որ անմիջապէս սկսաւ եռուն գործունէութեան, Կովկասի եւ Ռուսաստանի հայաշատ կեդրոններուն մէջ, կազմակերպելով մասնաճիւղեր եւ հրատարակելով մամուլի տասնեակ մը օրկաններ: Սակայն, 1917-ի փետրուարեան ռուսական յեղափոխութեան անմիջապէս ետք, Մարտ ամսուան ընթացքին իսկ վերակենդանացած հայ քատէթները այս անգամ վերստին պաշտօնապէս հրապարակ եկան հայկական անունով՝ Հայ Դեմոկրատական Կուսակցություն անունին տեղ որդեգրելով՝ Հայ Ժողովրդական Կուսակցություն անունը, եւ որպէս կեդրոն ունենալով Թիֆլիսը:

Այսպէս՝ Համբարձում Առաքելեան, Իսահակ Ամիրեան, Արշալոյս Միլիթարեան, Ռուսիոյ պետական տումայի կամ խորհրդարանի անդամներ Տօթթ. Յարութիւն Այվազեան, Միքայէլ Պապաջանեան, Յովսէփ Աթաբէկեան եւ ուրիշներ ստանձնեցին կուսակցական կարեւոր պաշտօններ:

Շարունակում է 6-ին

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Հայաստանի Հանրապետության շրջանին անոնք մասնակցեցան կառավարության կազմին եւ լուրջ բախումներ ունեցան օրուան իշխանություններուն՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության վարիչներուն՝ Խատիսեանի, Օհանջանեանի եւ Վրացեանին հետ:

1911-ին սկսեալ սերտ կապեր ստեղծուեցան Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցության հետ: Համբարձում Առաքելեան գաղտնաբար ներկայ գտնուեցաւ ՀՍՌԿ Ա. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին, ուր քննարկուեցաւ Վան զէնք հասցնելու հարցը: Իսկ 1919ին արդէն Վասպուրականէն Կովկաս գաղթած ռամկավարներու եւ կովկասահայ ժողովրդականներուն միջեւ ստեղծուած էր գործակցական միասնականութիւն:

ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹԻՒՆԸ «ՄՇԱԿ»ԻՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉԸ՝ «ԱՐՕՐ»ԻՆ

Դեկտեմբեր 19, 1892-ին Գրիգոր Արծրունիի մահէն ետք, Առաքելեան կը նշանակուի «Մշակ»ի խմբագրապետութեան պաշտօնին՝ Ալ. Քալանթարի գործակցութեամբ: Իր հրապարակագրի մեծարուեստ գործը եւ մեծաշուք փառքը կը կազմէ «Մշակ»ը: Ան սկսած էր գրել «Մշակ»ին 1872 թուականէն: 1908-էն ան կը դառնայ հրատարակիչներէն ու խմբագիրներէն մէկը, իսկ 1913էն ետք Առաքելեան թերթին հրատարակիչ-խմբագիրն էր արդէն: Ան, այնուհետեւ, մեծ հասունութեամբ, աննկուն կորովով վարեց այդ ծանրատար գործը եւ հանդիսացաւ ժամանակակից երիտասարդութեան եւ ժողովրդական խաւերու ներշնչող ոգին եւ ճշմարիտ առաջնորդը:

1910-1913 տարիներուն հրատարակած է «Արօր» ամսագիրը: Միաժամանակ աշխատակցելով հայկական ու ռուսական պարբերականներուն՝ շօշափելով կրթական գործին, մտաւորականութեան վիճակին, ինչպէս նաեւ՝ արեւմտահայերու ազգային ազատագրական պայքարին վերաբերող հարցեր: Առաքելեան առաջիններէն է եղած ողջունելու ցարական իշխանութեան տապալումը Ռուսաստանի մէջ, միւս կողմէ Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը դիմաւորած է գգուշաւոր լաւատեսութեամբ, այնպէս ինչպէս դիմաւորած էին օրին արտասահմանի իր գաղափարի ընկերները՝ ռամկավարները, մա՛նաւանդ Եգիպտոսի մէջ:

Առաքելեան իր մահէն եօթը տարի առաջ 1911-ին, տեսաւ իր յոգնաջան եւ դժնդակ աշխատութեան վարձատրութեան օրը, երբ «Մշակ»ի քառասնամեակը տօնուեցաւ մեծ խանդավառութեամբ: Այդ տօնակատարութիւնը Առաքելեանի գործունէութեան եւ յաղթանակի նշանակն էր միանգամայն, անոր քարոզած գաղափարականին ծաւալման ժողովրդական հաւաքական արտայայտութիւնը: Ու Առաքելեան տեսաւ այդ օրը:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՀԱԱԿԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՆԿՐԷՄԻՆ

1904-ին հայկական պատուիրակութեամբ մը կը մասնակցի ՀԱԱԿԻ խաղաղութեան միջազգային գոնկրէսին՝ Հայկական Հարցը դիւանագիտական շրջանակներու ուշադրութեանը յանձնելու հեռաւոր նպատակով: Մակայն, Եւրոպական դիւանագիտութենէն յուսախաբ, ան Արեւմտեան Հայաստանի ազատագրումը ի վերջոյ կապուած գտած է ռուսական զէնքի յաղթանակին հետ:

Առաքելեան Շահրիար կեղծանունով պատմրուածքեր ու վէպեր տպագրած է մամուլի մէջ:

«Ջիուտ Քուշան» (1902) վէպը վերցուած է պարսկական կեանքէն: Ան թարգմանական լուրջ աշխատանքներ կատարած է ֆրանսերէնէ (Մոպսսանի «Քսան վէպիկներ եւ գրոյցներ», 1907, Ֆլամարիոնի Ուրանիան, 1900-ին):

Առաքելեան սկիզբ դրած էր «Հանրագիտական բառարան»ի մը պատրաստութեան- 1915ին, որուն երկրորդ հատորի ձեռագիրը կը պահուի Երեւանի Պետական Համալսարանի Եղիշէ Չարենցի անուան հիմնադրամին մօտ: Ան եղած է Ռուսական աշխարհագրական, Փարիզի Societe Asiatique եւ միջազգային այլ ընկերութիւններու անդամ:

Պ Ա Ջ Ա Ր

Յարգելի Հայրենակիցներ

Միրով կը հրաւիրենք Ձեզ, աւանդութիւն դարձած, Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Տիկնանց Մարմնոյ տարեկան «Պագար»ին, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, 4 Նոյեմբեր 2017-ին, կ. ե. ժամը 5-էն սկսեալ:



Մեր ճոխ սեղաններուն վրայ պիտի գտնէք ամէն քիմքի հաճելի՝ որակաւոր ճաշերու եւ անուշեղէններու տեսակներ, պատրաստուած մեր անխոնջ տիկիներուն կողմէ, ինչպէս լեւնաճուն, մանթր, իջլի քեօֆթէ, թահինլի, սարմա, ամանորեայ նուէրներ, գիրքեր եւ այլն:

Վստահ ենք ձեր ներկայութեամբ պիտի քաջալերէք մեր «Պագար»ը, որմէ առաւելաբար կ'օգտուին մեր Մանկապարտէզը եւ կարօտեալները:

ՏԻԿՆԱՆԾ ՄԻՌՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Առաքելեանի գիտական աշխատակցութեանց համար ընտրուած է անդամ Ռուսական Կայսրութեան Աշխարհագրական Ընկերութեան, Ռուսա-

կան Կեդրոնական Հնագիտութեան անդամ, Societe Assiatique-ի եւ Comite d'Enseignement International Berne-ի:

Աշխատակցած է Կ. Սվաճեանի օրով «Արեւելք»ին, Արփիար Արփիարեանի օրով «Հայրենիք»ին, Մխիթարեաններու «Հանդէս Ամսօրեայ»ին եւ ռուսական թերթերուն:

ԳՈՐԾԵՐԸ

«La Question Arménienne», «Ազգայնութիւն», «Աղա Մահմուտ Շահ», «Խրիմեան Հայրիկի կաթողիկոսական ընտրութիւնը», «Ջէթուն», «Գալիլէյ», «Միլտոն», «Հասարակաց դատաստանին», «Եղոյի քոռ լախտը», «Ջիուտ Քուշան», «Թամարիս», «Վասակ Սիւնի», «Պատմութիւն Պարսից», «Տասներկու պատմուածք», «Պարսկահայոց պատմութիւն», «Ո՛ր է ազգային ինքնաձանաչութիւնը», «Les Kurdes en Perse», «Les Babis en Perse», «Les Guébres en Perse» նաեւ՝ «Հայագիտական Բառարան» մը: Ունի բազմաթիւ թարգմանական գործեր:

Համբարձում Առաքելեան բուն պայքարող մըն էր եղած Դաշնակցութեան վարած քաղաքականութեան դէմ, եւ Թիֆլիսի մէջ երբ ան իր հերթական ճառը կ'արտասանէր, 1918 Յուլիսի 6-ին, դաշնակցական գնդակէ զարնուելով կը վիրատուրի եւ կը մահանայ Յուլիս 11-ին:

Հայ Ռամկավար Կուսակցութիւնը շատ բան կը պարտի մեծանուն գործիչին, որուն գործակցութիւնը թանկագին պտուղներ տուած է իր գաղափարականի տարածման համար կովկասահայութեան մօտ:

Նիւ Ճըրճի

ՆՈՐ ԱՇԽԱՐՀ ԱԶԳԱՅԻՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Սեփականութիւն ԱՐԱՐԱՏ Մ Մ ՄԻՌՈՒԹԻՒՆ Միւթու 33, Նիքէա, Յունաստան Համակարգչային շարուածքը եւ էջադրումը՝ ՆՈՐ ԱՇԽԱՐՀ շաբաթաթերթի Տնօրէն՝ Ընկ. Մարգիս Խաչատուրեան Արտօնատէր - Փաստաբան՝ ընկ. Յակոբ Ճէւճեան

“NOR AΣXAP” Αρμένικη Εβδομαδιαία Εφημερίδα Ιδιοκτησία “ΑΡΑΡΑΤ” Φιλολογικό Αθλητικό Σωματείο

Διευθυντής Σαρκίς Χατσατουριάν Εκδότης - Ιάκωβος Φετζιάν Δικηγόρος

Σηστού 33 - TK 18450 - Νίκαια Τηλ: 210-4926085 “NOR ASHKHAR” Armenian Cultural Social Weekly 33 Sistou Str. GR 18450 NIKEA GREECE Tel-Fax: 00+30+210-4926085

Քաջալերեցէք հայ մամուլը

Բացի խմբագրականներէն, յօդուածագիրներու տեսակէտներն ու գաղափարները անպայմանօրէն չեն արտայայտեր թերթին ուղեգիծը:



Ռամկավար Ազատական Կուսակցության 96-րդ ամեակի հանդիսություն



Յունաստանի Ռամկավար Ազատական
կուսակցությունը սիրով կը հրաւիրէ Աթենահայ
հասարակությունը՝

**Կիրակի Նոյեմբեր 12-ին,
երեկոյեան ժամը 7.30-ին,**

INTERCONTINENTAL պանդոկին մէջ,
ուր կը տօնախմբէ՝ կուսակցության
հիմնադրման 96-րդ ամեակը:

Հանդիսությունը իր ներկայութեամբ կը պատուէ եւ
Յունարէն լեզուով որպէս օրուան բանախօս
ելոյթ կ'ունենայ Յունաստանի նախկին
Արտաքին Գործոց Նախարարուհի եւ
Արցախ-Ազրաբէյճան խաղաղութիւն հաստատման
Ե.Ա.Հ.Կ. Գրասենեակի տնօրէնուհի՝

Տիկ. Տորա Պաքոյեանի,
նիւթ ունենալով՝

ժողովուրդի փոխադրութեան համար ինքնաշարժ (բուլման) պիտի դրուի նախկին Արմէնիա ճաշարանէն երեկոյեան ժամը 6.45-ին

ΠΡΟΣΚΛΗΣΗ

Το παράρτημα Ελλάδας του Αρμενικού Δημοκρατικού Φιλελεύθερου Κόμματος (Ραμγκαβάρ Αζανταγκάν Γκουσακτσουτιούν) σας προσκαλεί στην επετειακή εκδήλωση για τα 96 χρόνια από την ίδρυση του κόμματος.

Κεντρικοί ομιλητές:

Θεοδώρα (Ντόρα) Μπακογιάννη,
βουλευτής, πρώην υπουργός Πολιτισμού
και Εξωτερικών,

και

Χρατς Κουγιουμτζιάν,
μέλος του Κεντρικού Συμβουλίου
του Αρμενικού Δημοκρατικού Φιλελεύθερου Κόμματος

Ξενοδοχείο INTERKONTINENTAL,
Κυριακή 12 Νοεμβρίου 2017, ώρα 7.30 μ.μ.

ΕΙΣΟΔΟΣ ΕΛΕΥΘΕΡΗ

Δωρεάν μεταφορά με πούλμαν από το πρώην εστιατόριο Αρμένια/οδ.Μπελογιάννη. Αναχώρηση.- 6.45 μμ.



**Կարդացէք ու տարածեցէք
"Նոր Աշխարհ" շաբաթաթերթը**